«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 52/51 23 03 2024թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ «ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿ» ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդի՝ 2024 թ. մարտի 6-ի թիվ 72/7 որոշումը՝

հրամայում եմ.

1. 2024 թ. մարտի 23-ից կազմակերպել և անցկացնել ընթացիկ տարվա ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթը:

2. Յուրաքանչյուր անվանակարգում (ըստ ֆակուլտետների) մրցույթի կազմակերպման պատասխանատուներ նշանակել ֆակուլտետների դեկաններին՝

- «Հումանիտար գիտություններ» մասնագիտությունների անվանակարգ՝ Կարինե Պողոսի Պողոսյանին,
- «Բնական գիտություններ» մասնագիտությունների անվանակարգ՝ Մանվել Աշոտի Զաքարյանին,
- «Տնտեսագիտություն» մասնագիտությունների անվանակարգ՝ Ալեքսան Շամիլի Մարգարյանին,
- «Կիրառական արվեստ» մասնագիտությունների անվանակարգ՝ Վահան Արշակի Աղաբաբյանին:

3. Գործընթացի վերահսկման պատասխանատվությունը դնել գիտական քարտուղար Միհր Սերգեյի Աթոյանի վրա:

4. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել փոխտնօրենին, գիտական քարտուղարին, Ուսումնամեթոդական վարչությանը, ֆակուլտետի դեկաններին և պրոֆեսորադասախոսական անձնակազմին:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ